ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№

«____»_____2023թ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան 2023 թվականի հուլիսի 13-ի Ձեր հարցման՝ ներկայացնում ենք պատասխանները.

1. Որքա՞ն գումար է ծախսել Նախարարությունը տեղեկատվական արշավների կազմակերպման և իրականացման նպատակով 2022 թվականի ընթացքում: Խնդրում ենք պետական բյուջեով և այլ ռեսուրսներով իրականացված ծախսերը ներկայացնել առանձնացված:

2022 թվականի ընթացքում տեղեկատվական արշավների կազմակերպման և իրականացման նպատակով պետական բյուջեով իրականացված ծախսերը կազմել են 36 142 705 ՀՀ դրամ, իսկ այլ ռեսուրսներով ծախսեր չեն իրականացվել:

2. Որքա՞ն գումար է նախատեսված Նախարարության տեղեկատվական արշավների կազմակերպման և իրականացման նպատակով 2023 թ.-ի համար: Խնդրում ենք պետական բյուջեով և այլ ռեսուրսներով իրականացված ծախսերը ներկայացնել առանձնացված:

2023 թվականին նախարարության տեղեկատվական արշավների կազմակերպման և իրականացման նպատակով նախատեսված է 220 000 000 ՀՀ դրամ: 2023 թվականի հուլիսի 14-ի դրությամբ տեղեկատվական արշավների կազմակերպման և իրականացման

նպատակով կնքված պայմանագրերի հանրագումարը կազմում է 66 965 812.4 դրամ, որից վճարվել է 21 128 852 դրամ: Պայմանագրերի մնացած մասը գտնվում է կնքման փուլում:

3. 4. Որքա՞ն գումար է ծախսել Նախարարությունը գերատեսչության պաշտոնական կայք(երի)ի պատրաստման կամ բարեփոխման նպատակով 2022 թվականի ընթացքում: Խնդրում ենք պետական բյուջեով և այլ ռեսուրսներով իրականացված ծախսերը ներկայացնել առանձնացված: Որքա՞ն գումար է նախատեսված Նախարարության պաշտոնական կայք(երի)ի պատրաստման կամ բարեփոխման նպատակով 2023 թ.-ի համար:Խնդրում ենք պետական բյուջեով և այլ ռեսուրսներով իրականացված ծախսերը ներկայացնել առանձնացված:

2022 և 2023 թվականներին նախարարության պաշտոնական կայքի պատրաստման կամ բարեփոխման նպատակով պետական բյուջեով և այլ ռեսուրսներով միջոցներ չեն նախատեսվել:

Հարգանքով՝

7/21/2023

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN KAREN 6911740142

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատարող՝
Լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ, Լիլյա Հարությունյան
011597212